Graphic Design Unit, Council of Europe
Produced by the Documents and Production Department (DPPD)
© Council of Europe, August 2006

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԵՎՐՈՊԱ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ

ՅՈԹ ՊԱՏՃԱՌ



1. Երեխաները փոքրիկ իրավունքներով մարդուկներ չեն

Երեխաներն ունեն իրավունքներ: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան երեխաներին ճանաչում է որոշ բազմաթիվ հիմնական իրավունքների կրողների: Եվրոպայում երեխաների հիմնարար իրավունքները պաշտպանում են նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Եվրոպական սոցիալական խարտիան: Դրանցից են՝ կյանքի իրավունքը, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը, պաշտպանությունը հարկադիր աշխատանքից կամ ստրկությունից, հարգանքը մասնավոր և ընտանեկան կյանքի հանդեպ, վտանգից պաշտպանվելու իրավունքը և կրթության իրավունքը:

«Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագիրը Եվրոպայի խորհրդի եռամյա ծրագիր է, որի նպատակը երեխաների իրավունքների նկատմամբ հարգանքի սերմանումն է Եվրոպայի բոլոր երկրներում:



2. Երեխաները խոցելի են. նրանք ավելի մեծ պաշտպանության կարիք ունեն

Երեխաները զոհ են դառնում բռնության տարբեր ձևերի: Նրանց դարձնում են ստրուկ, զինվոր, բանվոր: Երեխաներին անտեսում են, նրանց նկատմամբ բռնություն են կիրառում, սպանում են: Այս ամենը տեղի է ունենում փողոցում, դպրոցում, հիվանդանոցում, ինտերնետում, ժամանակավոր մեկուսարաններում, լրատվամիջոցներում, տանը և այուր, որտեղ երեխաները, թվում է՝ պետք է ապահով լինեն: Երեխաները խոցելի են և շատ դեպքերում կախում ունեն մեծահասակներից: Նրանք չեն կարող իրենց պաշտպանել, նրանց ձայնը հազվադեպ է լսվում: Անհրաժեշտ է հատուկ միջոցներ ձեռնարկել՝ երեխաների խոցելիությանը հակազդելու համար:

«Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագիրը նպատակ ունի արմատախիլ անել երեխաների նկատմամբ բռության բոլոր ձևերը: Այն հիմնված է հստակ սկզբունքների վրա՝ երեխաների պաշտպանություն, բռնության կանխարգելում, հանցագործների հետապնդում և երեխաների մասնակցություն: Ծրագիրն առանձնակի ուշադրություն է դարձնում խոցելի՝ հաշմանդամ, աղքատության մեջ ապրող և ծնողական խնամքից զուրկ երեխաների նակատմամբ:



3. Երեխաների նկատմամբ բռնությունը արդարացում չունի

Եվրոպական շատ երկրներում հասարակությունը հանդուրժում, մինչև իսկ՝ խրախուսում է բռնությունը երեխաների նկատմամբ, մասնավորապես՝ եթե այն առկա է ընտանիքի ներսում: Սակայն ոչ մի ավանդույթ, կրոն, հավատք, տնտեսանկան իրավիճակ կամ «դաստիարակչական» մեթոդ չի կարող արդարացում լինել ծեծի, ապտակի, խոշտանգման, անարգանքի, ստորացման կամ երեխայի արժանապատվությունը նսեմացնող որևէ այլ գործողության համար: Եվրոպան պետք է դառնա մի մայրցամաք, ուր այլևս գոյություն չունի մարմնական պատիժ՝ լինի տանը, դպրոցում թե այլ հաստատությունում:

«Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագիրը քարոզարշավ կիրականացնի երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեմ: Մասնավորաբար, միջոցներ կձեռնարկվեն իրազեկության բարձրացման, կրթության, ուսուցման, ընդունակությունների զարգացման ուղղությամբ՝ բռնությունից զերծ կենսակերպի և հանդուրժողականության բարձր մակարդակի հասնելու համար:



4. Երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը կարելի է կանխել

Երեխաների նկատմամբ բռնությունը շատ դեպքերում անտեսանելի է մնում, քանի որ երեխաները վախենում են այդ մասին բարձրաձայն խոսել, իսկ խոսելու դեպքում էլ մեծերը միշտ չէ, որ պատշաճ ձևով են արձագանքում: Տվյալների ու փաստերի պակասը խոչընդոտում է պետություններին՝ արդյունավետ կանխարգելիչ քաղաքականություն մշակելու հարցում:

«Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագիրը կաջակցի երկրներին՝ մշակելու երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման միջոցներ: Ծրագիրը կօգնի բարելավել հաղորդումների մեխանիզմները, կնպաստի բռության դեպքերի վաղ բացահայտմանն ու պատշաճ փաստագրմանը, աջակցություն կցուցաբերի ընտանիքներին: Այն կօժանդակի մասնագետներին՝ արագ և համանշանակ կերպով արձանագրել բռնության դեպքերը: Հատուկ ջանքեր կգործադրվեն՝ արմատախիլ անելու սեռական բռնությունը և երեխաների շահագործումը:



5. Երեխաների պաշտպանությունը պահանջում է ռազմավարական մոտեցում

Խնդրի բարդությունն ու կարևորությունը, ինչպես նաև՝ շահագրգիռ կողմերի մեծ թիվը, պահանջում են ռազմավարական մոտեցում: Երկրները պետք է սահմանեն կարճաժամկետ ու երկարաժամկետ խնդիրներ, վերանայեն իրենց օրենսդրությունն ու կառույցները և բոլոր ռեսուրսների ներգրավմամբ՝ աջակցեն մասնակցային գործընթաց:

«Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագիրը նպատակ ունի օգնել պետություններին՝ երեխաների իրավունքների պաշտպանության ազգային համակարգված ռազմավարության մշակելու, ինչպես նաև ընդգրկուն և գործուն օրենսդրական դաշտ մշակելու հարցում: Այն կառաջարկի արդյունավետ մոդելներ և կխթանի ազգային քաղաքականության մշակման մասնակցային գործընթացը:



6. Երեխաների իրավունքները բոլորիս են վերաբերում

Երեխաների իրավունքները պետք է արտացոլվեն ընդունվող բոլոր որոշումներում: Երեխաների հետ ամենօրյա շփում ունեցող մասնագետները, ներառյալ՝ առողջապահության ու սոցիալական աշխատողները, ուսուցիչները, իրավաբանները, դատավորները, լրագրողները ոստիկանները, ծնողներն ու գործարարները, պատասխանատվություն են կրում երեխաների բարեկեցության համար: Մեծ ու գնահատելի դեր ունեն նաև անկախ հաստատությունները և ոչ կառավարական կազմակերպությունները:

Երեխաների իրավունքներն առաջին հերթին վերաբերում են իրենց՝ երեխաներին: Սակայն շատ քիչ երեխաներ գիտեն իրենց իրավունքները, էլ չենք խոսում դրանք կիրառելու մասին: Երեխաները պետք է իրազեկ լինեն իրենց իրավունքներին և ներգրավվեն իրենց կյանքի վրա ազդեցություն թողնող որոշումների կայացմանը:

«Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագրի նպատակն է համախմբել ողջ հասարակությանը, իրազեկել յուրաքանչյուրին իր պատասխանատվության մասին, հզորացնել բոնությունը կանխարգելելու և երեխաներին պաշտպանելու կարողությունը: Ծրագիրը երեխաների համար մատչելի կդարձնի տեղեկատվությունը և երեխաների իմաստալից մասնակցության միջոցներ կմշակի բոլոր՝ տեղական, տարածքային և ազգային մակարդակներում:

ԵՐԱՇԽ ԵՐԵՍՆԵՐԻ ՀԱՎԱՐ

7. Երեխաների իրավունքները զարգացնում են Եվրոպան

Շնորհիվ միջազգային համագործակցության՝ երեխաների վիճակն զգալիորեն բարելավվել է: Միջազգային համագործակցության դերն անգնահատելի է եվրոպական շատ երկրներին հատուկ խնդիրներ լուծելու և անդրսահմանային հանցավորության դեմ պայքարի ժամանակ: Կիբեռհանցագործներն ու մարդկանց թրաֆիկինգով զբաղվողները հաճախ օգտվում են միջազգային համագործակցության պակասից:

Եվրոպայի խորհուրդը, կազմավորվելով 1949թ., նպատակ է ունցել կառուցել Եվրոպա՝ հիմնված երեք սյուների վրա՝ մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և օրենքի գերակայություն: Սա նշանակում է, որ ԵԽ անդամ բոլոր երկրները պետք է համատեղ գործեն և հանձնառու լինեն ստեղծելու մի միջավայր, ուր երեխաները կզգան ապահով ու երջանիկ:

«Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագիրը մեծապես կխթանի միջազգային համագործակցությունը: Ծրագիրը երեխաների իրավունքների պաշտպանությանը կծառայեցնի այնպիսի գործիքներ, ինչպես՝ չափանիշների սահմանումը, մոնիտորինգը, քաղաքականության մշակումը, տեխնիկական աջակցությունը և իրազեկումը: ԵԽ-ն կհամագործակցի այնպիսի գործընկերների հետ, ինչպիսիք են Եվրամիությունը, Յունիսեֆը և կիետևի ՄԱԿ-ի Երեխաների դեմ բռնության ուսումնասիրության հանձնարարականներին:

«Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ». աշխատանքն ընթացքի մեջ է

Եվրոպայի միջկառավարական կազմակերպություններից Եվրոպայի խորհուրդը լավագույն հնարավորություններն ունի երեխաների իրավունքների խնդիրն արդյունավետ լուծելու համար: Այն կարող է՝

1. համադրել արդյունավետ գործիքները, ինչպիսիք են՝ չափանիշների սահմանումը, մոնիտորինգը, համագործակցության և աջակցության ծրագրերը, ինչպես նաև՝ կրթությունն, ուսուցումն ու իրազեկումը:

2. հեշտությամբ համախմբել չորս հիմնական դերակատարներին (չորս սյուներ)՝ կառավարությունները, խորհրդարանները, տեղական իշխանությունները, հասարակական կազմակերպությունները:

Եվրոպայի խորհրդի մարմինները, հաստատություններն ու հիմնական վարչական միավորները կիսում են ծրագրի տեսլականը և արդեն իսկ լուսա են ներդնում դրա խնդիրների իրագործմանը: Այս «թիմային աշխատանքն» առաջնորդում է աշխատանքային խումբը, (ուր ներկայացված են Եվրոպայի խորհրդի համապատասխան քարտուղարությունները) և ծրագրի համակարգող խորհուրդը (Սոցիալական համախմբվածության գլխավոր տնօրինության քարտուղարությանն առընթեր):

Ստորև բերված են Եվրոպայի խորհրդի ընթացիկ գործունեության օրինակներ:

1. Չափանիշների սահմանում

Չափանիշներ սահմանելու հնարավորությունը, թերևս, Եվրոպայի խորհրդի ամենաարժեքավոր կարողությունն է: Դա հնարավոր է դառնում աշխատանքին Խորհրդի մարմինների ու կառույցների աշխույժ մասնակցության շնորհիվ: Երեխաներին վերաբերող՝ մշակման փուլում գտնվող իրավական փաստաթղթերի թվում են.

- Կոնվենցիա և հանձնարարական՝ երեխաներին սեռական շահագործումից և բռնությունից պաշտպանելու վերաբերյալ
- Հանձնարարական՝ ծնողական դրական և բռնությունից զերծ վերաբերմունքի վերաբերյալ
- Հանձնարարական՝ նոր տեղեկատվական միջավայրում երեխաներին տեղ ապահովելու վերաբերյալ
- Պաշտպանություն՝ լրատվամիջոցներում վնասակար բովանդակություն ունեցող նյութերից
- Հանձնարարական՝ փոքրամասնություններ ներկայացնող երիտասարդների մասնակցության վերաբերյալ
- Հանձնարարական, որ պարունակում է եվրոպական կանոններ՝ ազատազրկման կամ հանրային պատժամիջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ

- Որդեգրման մասին եվրոպական լրամշակված կոնվենցիա
- Եվրոպայի խորհրդի քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության խարտիա

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը նույնպես որոշումներ և հանձնարարականներ է ընդունում երեխաների իրավունքների վերաբերյալ: Ներկայումս կոմիտեներում պատրաստվում են հետևյալ զեկույցները, որոնք կարող են հանգեցնել կարևոր իրավական փաստաթղթերի ընդունման.

- զեկույց՝ Երեխաների բռնության և շահագործման դեմ պայքարի իրավական կամ այլ միջոցների կիրառման մասին
- զեկույց՝ ՁԻԱՀ-ից որբացած և խոցելի երեխաների մասին
- զեկույց՝ Եվրոպայում երեխաների ու դեռահասների շրջանում ինքնասպանության՝ որպես լուրջ հանրային առողջապահական խնդրի վերաբերյալ
- զեկույց՝ երեխաների նկատմամբ բռնության առաջին տեսակի՝ ծննդյան պահին լքվելու կանխարգելման վերաբերյալ:

2. Մոնիտորինգ

Անդամ երկրների՝ մարդու իրավունքների ստանդարտներին հետևելու վերահսկողությունը կարևորագույն նշանակություն ունի: Եվրոպայի խորհրդի կանոնադրական մարմինները (խորհրդարանական վեհաժողովը և նախարարների կոմիտեն) սահմանել են մոնիտորինգի տարբեր համակարգեր (տվյալ երկրի շրջանակներում, թեմատիկ կամ համաձայնագրերով սահմանված): Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի ընդունած որոշումներն ու եզրակացություններն այս ոլորտի ակնառու օրինակներ են:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը, որը անկախ մարմին է, մեծամասամբ աջակցում է իրավիճակի գնահատմանը՝ երկրներ կատարած այցերի միջոցով: Գերագույն հանձնակատարի զեկույցներն ու գործունեությունը շարունակաբար անդրադառնում են երեխաների իրավունքների հարցերին:

Կբարձրացվի մոնիտորինգ իրականացնող մարմինների շահագրգռությունը՝ առավել մեծ ուշադրություն դարձնելու երեխաների նկատմամբ բռնության հարցերին: «Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագիրը կսահմանի երեխաների իրավունքներին վերաբերող որոշումների, զեկույցների ու հանձնարարականների տարբերական վերանայում:

3. Քաղաքականության մշակում

Եվրոպայի խորհուրդը զգալի փորձ է կուտակել քաղաքականության մշակման ասպարեզում: Պետական կառույցների ներկայացուցիչներից և հասարակական կազմակերպություններից դիտորդներից բաղկացած կազմկոմիտեները և այլ միջպետական կազմակերպություններ ձեռնարկում են աշխատանքի հիմնական մասը: Նրանք Եվրոպայի խորհրդի ոլորտային քաղաքականության ճարտարապետներն են: Օրենսդրական համագործակցության, մարդու իրավունքների, սոցիալական համախմբվածության, մշակույթի, կրթության ու երիտասարդության հարցերի կազմկոմիտեները մշտապես օրակարգում են պահում երեխաներին վերաբերող խնդիրները, այդ թվում՝

- Գնչու երեխաների համար կրթության ապահովում
- Կրթություն ժողովրդավարական քաղաքացիության համար
- հաշմանդամ երեխաների իրավունքներ
- հաստատություններում գտնվող երեխաների իրավունքներ
- միգրանտ երեխաների ինտեգրում
- երեխաների մասնակցությունն ապահովող մեթոդների, ցանցերի ու միջոցների մշակում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով չներգրավված երեխաներին (միգրանտ, թափառաշրջիկ երեխաներ, հաստատություններում գտնվող, հաշմանդամ երեխաներ և այլն)

- երիտասարդությանը վերաբերող ազգային քաղաքականության վերանայում՝ երեխայի իրավունքների տեսանկյունից

- ազգային ու տեղական մակարդակով օրենսդրական ու ինստիտուցիոնալ համակարգի վերլուծություն, լավագույն օրինակների բացահայտում, երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության մոդելների մշակում

- ազգային ու տեղական մակարդակով կանխարգելման քաղաքականության վերլուծություն, լավագույն օրինակների բացահայտում, բռնության կանխարգելման մոդելների մշակում ազգային ու տեղական մակարդակներում

- ծնողական դրական վարքագծի ուղենիշների մշակում

- քաղքացիության և մարդու իրավունքների կրթության ոլորտի միջոցների մշակում:

4. Համագործակցություն և աջակցություն

- Եվրոպայի խորհուրդը պատրաստ է նաև, եթե այդպիսի խնդրանք լինի, օրենսդրական բարեփոխումների, քաղաքականության մշակման, կադրերի վերապատրաստման հարցերում երկրների հետ աշխատել անհատապես:

5. Իրազեկում, կրթություն և ուսուցում

Ստանդարտները ու քաղաքականությունն անհրաժեշտ է զուգակցել իրազեկության, կրթության և ուսուցման կազմակերպման հետ: Ներկայիս գործողությունները ներառում են.

- երեխաների իրավունքների մասին կայքի ստեղծում
- երեխաների օգտագործման համար հարմար կայքի ստեղծում
- ձեռնարկ՝ ինտերնետային գիտելիքների, դպրոցներում բռնության, դպրոցում ժողովրդավար կառավարման և այլնի մասին
- դասավանդողների համար ձեռնարկների տպագրություն՝ մարդու իրավունքների, սեռային բռնության, դպրոցական բռնության մասին
- տեղական ու մարզային կյանքին երիտասարդների մասնակցության խարտիայի՝ երեխաների ու երիտասարդների համար նախատեսված տարբերակի տպագրություն
- տեղեկատվական արշավներ այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպես, օրինակ՝ սեռական բռնությունը, մարմնական պատիժը, բռնությունը դպրոցում, բռնությունը լրատվամիջոցներում:

Եվրոպայի Խորհուրդը և երեխաների իրավունքները

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

1. Կնվենցիաներ

Հիմնական կոնվենցիաներ

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիա (1950թ.)
- Եվրոպական սոցիալական խարտնա (1961)
- Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա (1996)
- Եվրոպական սոցիալական խարտիայի լրացուցիչ արձանագրություն, որով նախատեսվում է կոլեկտիվ գանգատների համակարգ (1995)
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիա (1987)

Այլ կոնվենցիաներ

- Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2005)
- Երեխաների հետ շփման մասին կոնվենցիա (2005)
- Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիա (2001)

- Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիա (1997)
- Եվրոպական կոնվենցիա երեխաների իրավունքների իրականացման մասին (1996)
- Եվրոպականի կոնվենցիա երեխաների խնամակալության և երեխաների խնամակալության վերականգնման վերաբերյալ որոշումների ճանաչման և դրանց կատարման մասին (1980)
- Աոթորինածին երեխաների իրավական կարգավիճակի մասին եվրոպական կոնվենցիա (1975)
- Եվրոպական կոնվենցիա երեխաների որդեգրման մասին (1967)

2. Նախարարների կոմիտեի հանձնարարականներն ու որոշումները (1990-2006)

- Հանձնարարական Rec (2006)1 Երիտասարդական քաղաքակնության մեջ ազգային երիտասարդական խորհուրդների դերի մասին
- Հանձնարարական Rec (2005)5 Գիշերօթիկ հաստատություններում բնակվող երեխաների իրավունքների մասին
- Հանձարարական Rec (2004)13 Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության մասին
- Հանձնարարական Rec (2003)20 Անչափահասների իրավախախտումների և անչափահասների արդարադատության նոր մոտեցումների մասին
- Հանձնարարական Rec (2002) 5 Կանանց բռնությունից պաշտպանելու մասին
- Հանձնարարական Rec (2001)16 Սեռական շահագործումից երեխաների պաշտպանության մասին

- Հանձնարարական Rec (2001)10 Եվրոպական ոստիկանական վարքականոնների մասին
- Հանձնարարական Rec (2000)11 Գործողություններ ընդդեմ սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիկինգի
- Հանձնարարակն թիվ R (98)8 Ընտանեկան ու հանրային կյանքին երեխաների մասնակցության մասին
- Հանձնարարական թիվ R (97)19 Էլեկտրոնային լրատվամիջոցներում բռնության պատկերման մասին
- Հանձնարարական թիվ R (97)13 Վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքի մասին
- Հանձնարարական թիվ R (94)14 Ներդաշնակ և համընդգրկուն ընտանեկան քաղաքանության մասին
- Հանձնարարական թիվ R (93)2 Երեխայի բռնության սոցիալ- բժշկական ասպեկտների մասին
- Հանձնարարական թիվ R (91)11 Երեխաների և երիտասարդների սեռական շահագործման, պոռնոգրաֆիայի, մարմնավաճառության և թրաֆիկինգի մասին
- Հանձնարարական թիվ R (91)9 Ընտանեկան հարցերում արտակարգ միջոցների ձեռնարկման մասին
- Հանձնարարական թիվ R (90)2 Ընտանիքում բռնության դեմ սոցիալական միջոցների մասին

- Բանաձև ResAP (2005)1 Հաշմանդամ մեծահասակներին և երեխաներին բռնությունից պաշտպանելու մասին

3. Խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված հանձնարարականներ և բանաձևեր (1990-2005)

- Հանձնարարական 1703 (2005) Ընտանեկան խնամքից զրկված, օթևանի կարիք ունեցող երեխաներին աջակցելու մասին
- Հանձնարարական 1698 (2005) Հաստատություններում գտնվող երեխաների իրավունքների մասին. Խորհրդարանական վեհաժողովի 1601 (2003) հանձնարարականի իրականացման վերլուծություն
- Հանձնարարական 1666 (2004) Մարմնական պատժի համաեվրոպական արգելքի մասին
- Հանձնարարական 1596 (2003) Եվրոպայում երիտասարդ միգրանտների վիճակի մասին
- Հանձնարարական 1632 (2003) Ծանր վիճակում գտնվող պատանիների մասին՝ պատանեկան տկարության առողջապահական մոտեցումը
- Հանձնարարական 1601 (2003) Հաստատություններում գտնվող լքված երեխաների ճակատագրի բարելավման մասին
- Հանձնարարական 1561 (2002) Հարավարևելյան Եվրոպայում պատերազմական իրավիճակում հայտնված երեխաների համար սոցիալական միջոցների մասին
- Հանձնարարական 1555 (2002) Լրատվամիջոցներոմ կնոջ կերպարի մասին
- Հանձնարարական 1551 (2002) Երեխաների հետ և երեխաների համար 21-րդ դարի հասարակություն կառուցելու մասին. Երեխաների եվրոպական ռազմավարության կատարման վերլուծություն (Հանձնարարական 1286, 1996)
- Հանձնարարական 1545 (2002) Արշավ կանանց թրաֆիկինգի դեմ

- Հանձնարարական 1532 (2001) Գյուղերում ու քաղաքներում երեխաներին ու դեռահասներին ուղղված դինամիկ սոցիալական քաղաքականության մասին
- Հանձնարարական 1526 (2001) Անչափահասների թրաֆիկինգի դեմ քարոզարշավի մասին՝ արևելաեվրոպական ուղին վերացնելու մասին. Մոլդովայի օրինակը
- Հանձնարարական 1523 (2001) Տնային ստրկության մասին
- Հանձնարարական1501 (2001) Երեխայի կրթության հարցում ծնողների և ուսուցիչների պատասխանատվության մասին
- Հանձնարարական 1459 (2000) Միջերկրականի հարավից դեպի Եվրոպա թաքնված միգրացիայի մասին
- Հանձնարարական 1443 (2000) Միջազգային որդեգրման ժամանակ երեխաների իրավունքների մասին՝
- Հանձնարարական1398 (1999) Ալբանիայում երեխաների վիճակի մասին
- Հանձնարարական 1371 (1998) Երեխաների նկատմամբ բռնարարքների ու անտարբերության մասին
- Հանձնարարական 1336 (1997) Երեխաների աշխատանքային շահագործման մասին
- Հանձնարարական 1286 (1996) Եվրոպայում երեխաներին ուղղված ռազմավարության մասին
- Հանձնարարական 1121 (1990) Երեխաների իրավունքների մասին

- Բանաձև 1337 (2003) Կանանց թրաֆիկինգով և մարմնավաճառությամբ պայմանավորված միգրացիայի մասին

- Բանաձև 1307 (2002) Երեխաների սեռական շահագործման նկատմամբ անհանդուրժողականության մասին
- Բանաձև 1291 (2002) Ծնողներից մեկի կողմից երեխայի առևանգման մասին
- Բանաձև 1247 (2001) Կանացի սեռական օրգանների խեղման մասին
- Բանաձև 1215 (2000) Երեխաների զինվորագրման և ռազմական գործողություններին երեխաների մասնակցության մասին
- Բանաձև 1212 (2000) Ցինված բախումների ժամանակ բռնաբարությունների մասին
- Բանաձև 1099 (1996) Երեխաների սեռական շահագործման մասին

4. Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնարարականներն ու բանաձևերը

- Հանձնարարական 135 (2003) Դպրոցում բռնության դեմ պայքարի ու կանխարգելման տեղական գործընկերություն մասին
- Հանձնարարական 53 (1999) Խոցելի երեխաների կամ դեռահասների ու ընտանիքների նկատմամբ քաղաքականության մասին

- Բանաձև 160 (2003) դպրոցում բռնության դեմ պայքարի ու կանխարգելման տեղական գործընկերություն մասին
- Բանաձև 74 (1999) Խոցելի երեխաների կամ դեռահասների ու ընտանիքների նկատմամբ քաղաքականության մասին



Կառուցի՛ր մեզ հետ

«Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագրի գրաֆիկական պատկերը ներշնչված է թանգրամից: Թանգրամը չինական մտքի խաղ է՝ նման գլուխկոտրուկի: Խաղի իմաստն այն է, որ պահանջվում է պատկերներ պատրաստել յոթ ստանդարտ կտորներից՝ երկու մեծ, մեկ միջին և երկու փոքր եռանկյունիներից, նաև մեկ քառակուսուց և մեկ զուգահեռանիստից: Առաջին հայացքից դա հեշտ է թվում, բայց մի քանի անգամ փորձելուց հետո միտքդ կփոխես: Եթե այս խաղը երբեք չես խաղացել, փորձիր վերարտադրել այս գրքույկի պատկերները դիմացի էջից կտրելով կտորները: Եթե չի ստացվում, խնդրիր մի երեխայի օգնել քեզ, կամ տե՛ս պատասխանները 33-34 էջերում:

Թանգրամ

Թանգրամ

Լուծումներ



Լուծումներ



Unité de coordination
«Construire une Europe pour et avec les enfants»

DGIII - Cohésion sociale
Conseil de l'Europe
F - 67075 Strasbourg Cedex
Tél.: 33 (0)3 90 21 52 51
Fax: 33 (0)3 90 21 52 85
www.coe.int/children

BUILDING A EUROPE FOR AND WITH CHILDREN

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE